

Հող. Տ. Նարեկ Արզ. Մարթադէյան: Ս. Պատարարդէն Լուսի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, Արթ. Տ. Կարապետ Ա. Քնն. Անդրէասեանի Հողոյն համար, անոր անուան տօնին առթիւ:

* Եր. 31 Յուն.— Ս. Ամոնի եւ այլ ձգնաւորացն: Ս. Պատարարդ մատուցուեցաւ ի Ս. Գլխապիբ: Ժամարարն էր Հող. Տ. Սեան Արզ. Ղաթիկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* Եր. 3 Յուն.— Ծրանական Հիւանդանոցի վերաբերյալ Տեղ. Լորանթ Կատարի մեկնումին առթիւ Թերթա Սանքա Սթրք Քլալի մէջ տրուած ողջերթի ընդունելութեան Պատրիարքարանի կողմէ ներկայ դանուկեան Հող. Տ. Կիրեղ Մ. Վրդ. եւ Տիար Կ. Հինգլեան:

* Եւ. 8 Յուն.— Օրթոտոքս եկեղեցիի Ս. Մընդեան տօնի առթիւ, Ամեն. Պատրիարք Ս. Հայր, ի պլուս Միաբանութեան, շնորհաւորական այցելութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին: Ապա, Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոսի զլիաւորութեամբ, Հող. Հայրեր նոյն նպատակաւ այցելեցին

Ղոյտոց, Ասորոց եւ Հաղէլաց Գերշ. Եպիսկոպոսներուն:

* Գլ. 20 Յուն.— Մեր Ս. Մնդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ ժամը 9-30էն սկսեալ, Պատրիարքարան այցելութեան եկան յաղորդարար, Յունաց եւ Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքները, Ծրանայիսիկեան Գերշ. Կիրթոսը, Ղոյտոց, Ասորոց, Հաղէլաց եւ Յայն-Կաթոլիկներու Եպիսկոպոսները, բոլորն ալ իրենց Միաբանութեան անդամներով, Պապական Գերշ. Նուրիակը, Անկլիքան Գերշ. Առնոյիսկոպոսը եւ Արար-Անկլիքան Եպիսկոպոսը, Հայ-Կաթոլիկներու եւ Մարտիրոս Համայնքի մեծաւորները, Լուսեանականներու եւ Արար-Լուսեանականներու ներկայները եւ Ռուսաց Վանքի Մեծաւորը:

Այցելեցին նաեւ կառավարական բարձրաստիճան պաշտօնեաները եւ Ս. Քաղաքի բովանդակ Հիւպատոսարձառ կաղմը:

* Գլ. 13 Յուն.— Հարաւային Ամերիկայի Կաթ. Պատուիրակի Փոխանորդ եւ Ս. Աթոռոյ Միաբան Հող. Տ. Յարութիւն Մ. Վրդ. Մուկան ժամանեց Ս. Աթոռ եւ մեկնեցաւ Մնդեան տօնի տարադուրեանց ժամանակեղէ յետոյ:

* Եւ. 15 Յուն.— Կիպրոսի Թեմին Առաջնորդ եւ Տան Կիլիկիոյ Միաբանութեան անդամ Հող. Տ. Արդէն Մ. Վրդ. Աւետիքեան Հիւրարար ժամանեց Ս. Աթոռ եւ Ս. Մնդեան մեզի հետ անցնելէ ետք վերադարձաւ իր պաշտօնավայրը:

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Շարաթ, 14 Փետրուար 1970, երեկոյեան ժամը 7-ին, Հ. Ե. Միւնթեան սրահին մէջ տեղի ունեցաւ զբական-դեղարուեստական երեկոյ մը՝ նուիրուած Յովհաննէս Թումանեանի կեանքին ու գործին: Հաւաքոյթը կազմակերպուած էր Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի կողմէ, եւ կը նախադահէր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

Հանդէսը բացաւ եւ վարեց Դպրեմանքի Վերաստեւոյ՝ Գերշ. Տ. Շահէ Եպ. Աճէմեան, եւ Թումանեանի կեանքին ու ստեղծագործութեան մասին խօսեցան Դպրեմանքի ուսուցիչներ՝ Պրեք. Հ. Նազդաշեան եւ Ա. Գալաձեան: Գեղարուեստական յայտաւորը, որ կը բաղկանար մեներգներէ, արտասանութիւններէ, խմբերգէ եւ ամուսնէ, ամբողջութեամբ կատարուեցաւ ուսուցիչներու ու Ժառանգաւոր սաներու կողմէ: Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը փակեց երեկոն՝ դրուատիքը ընելով մեծ Բանաստեղծին եւ մեծ Մարդուն: